

Բ. Ամսուն ատել շուր սառեցընելու համար ա-
ժան խառնուրդ.

Քիւրեղացեալ սոտայի ծծմբակ. . . . 4 մաս.
Նծմբային թթու' 41 աստիճանի . . . 3

Գ. Սասիկ ցուրտ խառնուրդ.

Զիւն 3 մաս.
Նծմբային թթու' թոյլ. 2

Դ. Զրոյէն 15 հարիւրամասն աստիճան ցած
խառնուրդ.

Զիւն. 2 մաս.
Ծովու աղ. 1

Կրակ դարձած մետաղէ ամանի մէջ կրնաս
չուր սառեցընել այս կերպով.

Փլաթինէ աման մը այնչափ տաքցուր որ
կաս-կարմիր լինի. մէջը քիչ մը չուր լեցուր,
ետքն ալ քիչ մը ծծմբային թթու: Թէ որ ա-
մանը վար դարձնես, այն խառնուրդը սառած
կընկնի մէջէն:

Այս երեւութիս պատճառն այն է որ ծծմբ-
բային թթուն խիստ շուր շոգի կդառնայ ա-
մանին տաքութեամբը, այնպէս որ անոր շո-
գիացմանէն առաջ եկած պաղութիւնը բաւա-
կան կլինի չուրը սառեցընելու:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ,

Բ.

Ո՞ր թագաւորն էր
Անոնը հինգով,
Որ շատ երկիրներ
Նըւաճեց զէնքով,
Կեանքը գըլիսովին
Փառք ու պարծանքով
Անցուց իթըւին
Հազարով հինգով.
Շատ բարիք ըրաւ
Կըսեն՝ շատ հոգւոց,
Եւ ինքն էր՝ ըստ
Իւր հօգւոյն հոգւոց,
Տապանէն ելաւ
Սեւ կըրօնաւոր,
Եւ դարձեալ մըտաւ
Իքունն ահաւոր,
Մարմնոյն կրօնաւորք
Հանգիստ չըտըւին,
Բայց եւ երկնաւորք
Զարթնուլ չըթողին:

ՏԱՐԻՈՅՍ ՕՐԱՅՈՒՅԻՆ ՓԵՏՐՈՒԱՐԻ ՀԱՆԵԼՈՒԿԻՆ Է ԱՊԱԿԻ (Ճամ):

ՀՐԱՄԱՆՈՒ ԳՐԱՎԵՆՈՒԹԵԱՆ. իթ եղոսիս, իշխանութիւն. 1863 Յունուարի 1863.

Խթպարանի Խալիպեան Առաջնարանի ազգիս Հայոց.